

մաղաչտ մը — դուցէ մեծագոյնը Մեծ Յեղափոխութեան օրերէն ի վեր — ուր Ֆրանսան, բաժնուած երկու հակամարտ բանակներու, ողջ աշխարհը կը դղրդացնէր իր ներքին բախումներով:

Իրէյֆուսեան ռազմաղաչտը... Գուցէ երբեք դադարակալան պայքար մը յանուն մարդկային իրաւունքներու չէր սկսուեր այնքան անհաւասար պայմաններու մէջ: Մէկ կողմէն՝ ամբողջ զինուորական կաստան եւ կղերականպահանջական խաթամութիւն, որ սպէտ զանգուածներուն յենուած, դժոխային չարչարանքի մատներ էր անմեղ հրէայ մը: Միւս կողմէն՝ բուռ մը դադարակալանութիւն գործիչներ, որ խիզախօրէն — յաճախ մահուան սպառնալիքներուն տակ — կը ծառանային դահիճներուն դէմ, կ'ուզէին փրկել յեղափոխական եւ ազատախոհ Ֆրանսայի պատիւը աշխարհի առջև: Պայքարը կը վարէր մէկ կողմէն Ժօնէս, ընկերավարական իր օրգանին մէջ, միւս կողմէն Կլէմանսօ «Aurore» թերթին մէջ, Ֆրանսիս դը Պրէսսանսէի աջակցութեամբ: «Օրօր»ը դարձաւ Իրէյֆուսեաններու կեդրոնական օրգանը, հոն էր, որ Զօլա հնչեցուց անազանքը իր հոչակաւոր «Կը մեղադրեմ»ով: Կլէմանսօ, թերթին հոգին էր եւ ամէն օր իր թունոտ սրլաքները կը տեղար կղերա-զինուորական կաստային դէմ, զոր ի վերջոյ շնչասպառ գետին փոսց, իր մեծանուն համախոհներու աջակցութեամբ, որոնց միահամուռ գրոհին չնորհիւ, Իրէյֆուս ազատեցաւ յաւիտենական բերդարդելութեան զարհուրանքներէն, հեռաւոր ովկիանի «Սատանայի Կղզիին» մէջ:

Անցաւ դրէյֆուսեան ռազմանը, եկան աւելի խաղաղ օրեր: Վազըր նորէն պարլամենտի մէջ է, այս անգամ իրբեւ ծերակուտական եւ խարանող Ֆիլիպպեաններով նորէն կը տապալէ վարչապետներ ու դահիճներ: Գրիչը, սակայն, չի լքեր: Բայց այլևս «Օրօր»ի մէջ չէ: Գժտուեցաւ եւ Պրէսսանսէի հետ — որ միշտ աւելի կը մօտենար Ժօնէսին ու կը ձգէր «Թան»ի արտաքին բաժնի խմբագրութիւնը — գժտուեցաւ Իւրբէն Գօհիէի եւ գրեթէ բոլոր պաշտօնակիցներուն հետ, հեռացաւ «Օրօր»էն եւ հիմնեց իր անձնական օրգանը, «Բլօք» շաբաթաթերթը, զոր ինքը մեն-մինակ կը լեցնէր ծայրէ ծայր:

Ատիկա բաւ էր... Կլէմանսոյին ամէնքը կը կարդային, ամբողջ բարձր մտաւորականութիւնը: Հոգ էր, «Բլօք» շաբաթաթերթին մէջ, որ նա հրատարակեց — դեղեցիկ յօդուածաշարքով մը — իր գգայացունց մեղադրականը «Թան»ի համբաւաւոր տնօրէն Ալբրիան էրրարի դէմ, ամբաստանեց զայն, որպէս վատթարագոյն տեսակի կաշառակեր, որ ոսկիներ կը ըստանար Համիտեան կառավարութենէն՝ անոր ոճիւրները ծածկելու համար: Հարուածը մահացու էր պարիզեան մեծագոյն թերթի տնօրէնի պատուին ու վարկին համար եւ Կլէմանսոյի պէս անկախ ու անվախ մարդը միայն կարող էր հասցնել նման հարուածներ: Ալբրիան էրրար մեռելային լուծութեամբ պատասխանեց այդ փաստացի եւ զարհուրելի մերկացումներուն:

Ահա, վերջապէս, Կլէմանսօն — վարչապետ (1906 թ.): Շուրջ երեք տարի վարեց իր պաշտօնը հեղինակութեամբ, պատուով ու փառքով, բայց ոչ միշտ տախտով: Եւ տապալեցաւ իր անզուսպ լեզուի շնորհիւ, Դելկասսէի դէմ արտասանած իր մէկ ծանր մեղադրականի պատճառով:

Նորէն դէպի մամուլ: Իրսէնեան հերոսը նորէն մեկուսացաւ, սպասելով աւելի մեծ օրերու: Նոր թերթ մը կը հիմնէ — «Օմմ Լիբը», «Ալատ Մարդը»: Սորազիւր մը, որ կը խտացընէ լրագրողի աշխարհահայեացքը... Դարձեալ մենակ կը խմբագրէ: Գրիչը կը դործէ առանց դուլ ու դադարի: Յօդուածները՝ միշտ կենսաթրթիւն նիւթերու շուրջը, միշտ փայլուն ու բովանդակալի, լեցուն կեանքի փորձառութեամբ ու փիլիսոփայութեամբ: Առասպելական մը այդ մարդու գրական արտադրութիւնը: Կը հաշուեն, որ անոր յօդուածներու ժողովածուն կրնայ հարիւրի չափ հատորներ կազմել, իւրաքանչիւրը 350 էջոց: Եւ դեռ շարք մը գրքեր ալ ունի:

\* \* \*

Բայց Կլէմանսոյի մեծագոյն փառքը վերապահուած էր պատերազմի օրերուն — համաշխարհային պատերազմի՝ որու համար նա եղաւ նախախնամական մարդը: Երկար չենք գրեր, դէպքերը ծանօթ են: Հասան Վազրի երազած օրերը — փոխ-վրէժի ու հատուցումի օրերը: Պատերազմի առաջին իսկ վայրկեան-